

այնորիկ վկայեցին գոլ «պողաչաճի») եւ ընդ ասել բանին իսկոյն ամենեքեան ի վեր ելին ի վերայ ոտից եւ կանգնեցան, եւ ոմանք ի նոցունց աղաղակէին. «Իստէմէիդ», եւ ոմանք թէ «Չենք ուզէր, զՅակոբ պատրիարքն կուզէնք», եւ ի յայսմ իրակութեանցս յանկարծակի բացեալ եղեւ դուռն պահարանին, եւ ելին անտի եէնիչէրիք եւ չուխատարքն փաշային աւելի քան ղերեսուն, ոմանք շըջապատեալ զՊրօխորօն եւ ի պատրիարքարանն տարին, եւ ոմանք սկսան դէպ առ ժողովուրդն խղճուկ ասել. «Միզ փատիշա՜ Ֆերմանընա քարշը քօրսունուզ քեաֆիրլէր», եւ ընդ ասելն սկսան անխնայապէս եւ անողորմաբար հարկանել զժողովուրդսն, ոմանք փայտիւ, ոմանք տաճկինակաւ, եւ ոմանք ղերդէստէյիւ ի յարտաքս վարել եւ մղել զժողովուրդն, եւ ի հարկանիլն ժողովրդոց աղաղակէին «վուրմա», ոմանք «Նէ վուրուրսունուզ», եւ ոմանք «Իմիր շէրին, ալլահըն էմրինէ գայլըլը», իսկ ոմանք. թէ «Վայ պաշըմ», եւ ոմանք «Վայ գօլում», եւ սկսան պէսպէս աղաղակաւ լալ, եւ յիրաւի իսկ տեսաք աչօք մերովք զդառնակսկիծ եւ ղխղճալի տեսարանս զայս, զի յոմանց գլուխքն պատառեալ էր, եւ յոմանց թեւքն խախտեալք էին ի տեղւոջէ իւրեանց, եւ այլք այլ կերպիւ մաղկտային զփորձ առնուլն ի ճաշակ զփայտն եւ զտաճկինակն, եւ սակայն ի յօրն աւագ ուրբաթու դէպ առ պատն եղեալ բարմախլըխիցն մինն խորտակեալ էր վասն բազմութեան ժողովրդոց, եւ ոչինչ գոյր անդ առ ի յենուլ եւ ի միւս կողմն էր ցած իբրեւ կէս կանգուն. զի ոմանք ոչ գիտելով զիրն զայն, այսինքն զոչ լինելն անդ ճաղին, սկսան զմիմեանս մղել դէպ առ այն որպէս յերեկն եւ եռանդն, եւ սկսան թօթափիլ ի վերայ միմեանց ի վայր անձինք քան զհարիւրն աւելի. եւ անդ էր տեսանել զբազմութիւն հեծողաց, եւ հառաչողաց, եւ անձանց իւրեանց